Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

B
4083

ՊԱՏԿԵՐԱՑՈՅՑ ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
ԳՐԱԳԻՐՔԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

ՊՐԱԿ Ա.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1910

813-2009

ՆՈՐԻՆ

ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ Բ. ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՈՅՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՆԸ ՈՐԴԻԱԿԱՆ ԱՄԵՆԱԽՈՐԻՆ ԱԿՆԱԾԱՆՕՔ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԱՄԲՈՂՋ ԳՈՐԾԻՍ ՄԱՍԻՆ

Ս. Էջմիածնի միաբան համարուելու պատիւն ունենալով և երկար տարիներից ի վեր Մայր Տաճարի լուսարարութեան պաշտօնում գտնուելով, ի վաղուց ինքնաբերաբար թելադրուած էի իմ պաշտօնի առիթից օգտուելով՝ իմովսանն մի փոքրիկ ծառայութիւն մատուցանել Ազգիս և մեր հնասէրներին. այն է Մայր Աթոռիս եկեղեցական զանազան տեսակ և մի քանի ազգային մասնաւոր հնութիւնները պատկերացոյց հաւաքածոյքով հրատարակել պէտք եղած համառօտ ծանօթութիւններով և իրենց արձանագրութիւններով։ Այս հաստատ որոշումով չորս տարիներից ի վեր պէտք եղած նիւթերը հետզհետէ հաւաքում էի։ Թէպէտ և Էջմիածնում և Մայր Տաճարում սրանցից շատ երևելի և կարի հետաքրքրական հնութիւններ կան ըստ բաւականին, որոնք եթէ հրատարակուէին, հրչափ դիւրութիւն պիտի ընծայէին մեր հնագէտներին՝ Հայոց հին գեղարուեստի մթին կէտերն ի լոյս բերուելու նկատմամբ, սակայն ես գործիս մէջ գտնուածները միայն ի լոյս ընծայելու հնարաւորութիւն ունէի։ Ամբողջ գործը պէտք է բաղկանայ հինգ պրակներից, իւրաքանչիւրը 50-ական նկարներով. բայց կարող է ոմանց մէջ 50-ից մի քիչ աւելի ևս լինին, ինչպէս է ներկայ Ա. պրակը, որ 53 նկարներից է բաղկացած։ Միւս բոլոր պրակների լուսանկարներն արդէն պատրաստուած լինելով՝ հետզհետէ պէտք է լոյս տեսնեն։

Գործիս պարունակութեան հնութիւնների թեմաները են, Իւղանկարչի պարունակները. Ասեղնագործ նկարներ ոսկի ընդունէ կերպասի վերայ դեղատեսակ ունելով և ոսկի ունելով գործուած. Տպագրայ նկարներ կիսաթանկ վերայ. Սրբոց նշխարների արծաթանոց տուփեր փանդակուած ջրաներով. Գաղտակուղեց (սապատ) դռներ և Արտաքին, Ոսկեղէն և արծաթանկէն զանազան Առօրեայ և Զարդեր, Արծաթանոց գաւազաններ. Արծաթանոց փանդակաջրեր Զահեր. Ոչ փառի Աղբիւրին հնութիւններ և ոչ փառի հնադարեան Վանդեր և Տեսարաններ, որոնցից ոչ փառնիներն ևս Էջմիածնի շրջանակից դուրս են։

Բացի սրանցից պիտի գտնուին նաև մի քանի նշանաւոր անձնաւորութիւններ և ինչ ինչ հաստատութեան շինութիւններ։ Այս հնութիւնների մէջ կան այնպիսիներ, որոնց մասին կարելի է ասել, որ դեռ առաջին անգամն են լոյս տեսնում։

Մի կարգ հնութիւնների նկարագրութեան և արձանագրութեան մասին օգտուած եմ Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի» աշխատասիրութիւնից։

Բնական է, որ գործիս մէջ կլինին թերութիւններ, որոնց համար յոյս ունիմ, թէ ընթերցողները ներողամիտ կգտնուին։ Եթէ իմ աշխատասիրութիւնը ընդունելութիւն գտնէ Ազգին մէջ, մտադիր եմ, յաջողութեամբ Տեառն այս կարգի ուրիշ հնութիւններ ապագայում ևս ի լոյս ընծայել։

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ս. Էջմիածնի հնագոյն նշանաւոր Խաչվառը: №. 1. *

Սորա վերայ գտնուում է հետևեալ արձանագրութիւնը.

Ց՝ Ս Ք՝ Ս
(ԽԱՉ)ՎԱՌՍ ՎԱՑԵԼԷ ԷՋՄԻԱԾՆԻ
ՑԻՇԱՏԱԿ Է ՍԻՄԷՈՆԻ Ք՝ՀԱՑՆԻ
ԵՒ ԱՄՈՒՄՆՈՑ ՔԱՄԱԼ Խ՝ԹՈՒՆԻՆ
ԾՆՈՂԱՑՆ ԵՒ ԶԱՒԱԿԱՑՆ։
ԹՎ։ ՄԱՐՏ. Ա.
ԳԻՐՍ ԶԵՌԱՄԲ
(ԱԶ)ԻԶ Խ՝ԹՈՒՆԻՆ ԵՒ ՄՕՐՆ ԳՈՀԱՐ ՄԵԼԻՔԻՆ։
ԲԱՐԶՈՂՔ ՍՈՐԱ Ի Մ՝Բ ԶԵՌԻՆ
ԶՄԵԶ ՑԻՇԵՍԶԻՔ Ի ՑԱՏԵՆԻՆ։

Այս Խաչվառը, որի մի երեսը Սուրբ Փրկչի պատկերն է ներկայացնում աթոռի վերայ բազմած և միւս երեսը՝ Տրդատի, Լուսաւորչի և Հռիփսիմէի նկարներն ոտքի կանգնած, մետաքսեայ կերպասի վերայ ընտիր և նուրբ ասեղնագործութիւն է երփնեռանգ մետաքսի և ոսկու թելերով։ Արձանագրութեան մի քանի տեղերից բառեր մաշած և ընկած են, որոնց մէջ են նաև թուականիշ տառերը, ինչպէս Թվ. բառին կից տեղը պարապ է, միայն նրա հանդիպակաց կողմը ամիսն և իւր թիւը մնացել են։

Դավրիժեցի Առաքել պատմագիրը սոյն խաչվառը «Խաչալամ» է յորջորջում, և պատմում է սորա մասին, թէ երբոր Աղթամարի Զաքարիա կաթուղիկոսը Հայոց ԶԺ. թուականին մեծ ընծաներով Դավրէժ Պարսից Զհանշահ թագաւորին է դիմում, Լուսաւորչի աջը, որ տարուած էր այնտեղ, նրանից իբրև ընծայ ետ է ստանում, մի և նոյն ժամանակ Շահը՝ Էջմիածնի ընդհանուր Հայոց հայրապետութեան պատիւն ևս շնորհում է նորան, որ գալիս է Էջմիածին, ուր գահակալելով՝ իւր իշխանութեան ներքև կառավարում է նաև Աղթամարի Աթոռը։ Սակայն փոքր ժամանակից յետոյ՝ մի պատճառով հայրապետը Պարսից շահի որդուց հալածուելով, ստիպւում է Լուսաւորչի աջի հետ այս խաչվառն էլ իւր հետն առած Էջմիածնից կրկին գնալ Աղթամար իւր հայրենի աթոռը մեծ հանդէսով ՋԺԱ թուին։ Աջն ու Խաչվառը մնում են այնտեղ 7 տարի. և վերջապէս Էջմիածնի Սարգիս կաթուղիկոսի օրով կրկին բերւում են Էջմիածին. թէ ինչպէս են բերւում, մանրամասն պատմում է Առաքել Դավրիժեցին**։

Ուստի սոյն Խաչվառը քանի որ ՋԺ

---

*) Նկարներն համապատասխան թուականներով իրենց կարգում ցուցուած են։

**) Պատմութիւն Առաքել վարդապետի. երես 429, Էջմիածին 1896։

թուին արդէն գոյութիւն ունէր, յայտնի է, որ նոյն ժամանակից աւելի առաջ յօրինուած պիտի լինէր. դժբաղդաբար թուականի տառերն ընկած լինելով ճիշդ ժամանակը չէ յայտնուում։ Ինչպէս Առաքել պատմագրի նկարագրութիւնից է երևում, որ հայրապետական և ուրիշ մեծաշուք հանդէսների և թափորների առջևից այս խաչվառը բարձրացրած տանելով՝ մեր նախնիք մեծ յարգ և արժանիք են տուած նրան՝ պատիւ հատուցանելով իրենց։ Այս արարողութիւնը յիշեցնում է նաև այն բուռն սէրը, որ Հայ ազգն ունեցած է իւր քրիստոնէական կրօնի նկատմամբ, ցանկալով ունենալ իրրև գրաշակ հոգևոր թագաւորութեան, նկարուած նոյն թագաւորութեան Հիմնադրի—Քրիստոսի պատկերով, ոչ արտաքին փառքից թելադրուած, այլ կենդանի հաւատով միշտ իւր սրտին մէջ ունենալով Պօղոս առաքեալի խօսքը, «Ունիմք այսուհետև Քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս զՈրդին Աստուծոյ, պինդ կալցուք զխոստովանութիւնն»։ (Եբր. Դ. 14.)

Մասն կենաց փայտի հանդերձ Տապանակով։ №. 2.
Տապանակի արտաքին երեսը. №. 3.

Սորա մասին Յովհաննէս եպիսկոպոս Շախխաթունեանցն իւր «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի» աշխատասիրութեան մէջ գրում է հետևեալը.

«Տապանակ միջակ գրութեամբ բոլորովին մաքուր արծաթի կաբի ընտիր գործուած քաջ արհեստաւորի, գլխովին ոսկեզօծ՝ անուանեալ բազմամասն. և է յանուն Յովսէփ արքեպիսկոպոսի Արզրումեանց. ունի զերկիփեղկեան դրունս՝ որոց ի ներքին կողմն պատկերք Բ. Լուսաւորչի և Յակոբայ Մըծբնայ հայրապետի, իսկ յարտաքին երեսն, ի վեր անդր ննջումն Աստուածամօր, ի ներքոյ Տեառն ի խաչէն՝ և այլ պատկերք՝ Տեառն եղբօր, Հռիփսիմէի, Թադէոսի, Յովհաննու Մկրտչի, Անդրէասի, Ստեփաննոսի նախավկայի, և Անանիայի։

Ի միջին տեղւոջ ազուցեալ կայ խաչարծաթի ոսկեզօծ ազամանդ, յակինթ և զմրուխտ ակամբք՝ յորում մասն փայտին կենաց. ի վերայ ընոյն խաչի գրեալ՝ ի վերոյ յելուն Յովսէփ վարդապետին Սանահնեցւոյ։ Ի շրջապատ այսը խաչի ի մակերևութի անդ տապանակին որոշ որոշ տեղիք մասանց նշխարաց յիշատակեալ սրբոցն և այլոց։ (Նոյան տապան, Սուրբ Կաթողիկէ, Տեառն եղբայր, Անդրէաս Առաքեալ, Մարկոս Աւետարանիչ, Թադէոս առաքեալ, Անանիա առաքեալ, Յովսէփ Արեմաթացի, Սուրբ Լուսաւորիչ, Սուրբ Գայիանէ, Սուրբ Հռիփսիմէ։

Ունի ի թիկանց յիշատակագրութիւն՝ ըստ այսմ. «Յիշատակ է պահարանս այս Հաշտարխանու քաղաքի Քրիստոսասէր եւ բարեպաշտուհի օրհնեալ կանանցն ամենից՝ յորոմմանն եւ աշխատութեամբն Թիֆլիզեցի Վիրշելէնց Փարսադանի կողակից մայր Աննային՝ եւ Մարիամին, ի վայելումն Տեառն Սիմէօն Սրբազան կաթուղիկոսի աշակերտ Սրբոյ աթոռոյն Էջմիածնի նուիրակ եւ Հաշտարխանու առաջնորդ Սանահնեցի Յովսէփ Արքեպիսկոպոսին Արղութեանց, զվնի մահուանն ի դրան Սրբոյ աթոռոյն Էջմիածնի, թուին Փրկչին 1775. իսկ Հայոց ՌՄԻԴ»։

Գեղարդ Ղունկիանոսի հարիւրապեսին. №. 4.

Սորա մասին Շահխաթունեանցը շատ երկար է գրում և զանազան վկայութիւններ մէջ բերում, որպէս զի հաստատէ, թէ Ղունկիանոսի իսկական գեղարդն է։ Այստեղ միայն պատմական մի փոքր մասն առնուած է՝ հանդերձ նկարագրութեամբ և արձանագրութեամբ։

«Զայս տէգ՝ որ և ասի Գեղարդ, ազուցեալն ի ծայր նիզակին Ղունկիանոսի հարիւրապետի՝ որով խոցեցաւ կող կենարարին զմեզ Յիսուսի, զկնի համբառնալոյ Տեառն առ Հայր ի յերկինս՝ Թադէոս առաքեալ ունելով ընդ իւր գայ յԵդեսիա առ Աբգար արքայ ըստ խոստման Փրկչին, և յետ քարոզութեան և նահատակութեան Առաքելոյն ի Հայաստան, մնայ այն շնորհ առ հաւատացեալսն յազգէ Հայոց՝ որոց առանձինն փոքրիկ եկեղեցի եկաց, մնաց մինչև ցբովանդակ լուսաւորութիւն ողջոյն ազգին։ Նահատակութեամբ և քարոզութեամբ մեծին Գրիգորի Պարթեւ առ Տրդատաւ. և այսպէս մնաց այս անգին պարգև գեղարդս սուրբ՝ առ Հայազնեայս, որ և այժմ կայ ասա ի սուրբ Կաթուղիկէ Եկեղեցւոջ Էջմիածնի»։

«Այս սուրբ Գեղարդ ունի տուփ արծաթի ծանրակշիռ երկայնաձև, գլուխն ուղիղ հաւաքեալ սրածայր ըստ օրինակին նոյն Գեղարդայ, որ և ունի զերկիփեղկեան դուռն նմանապէս արծաթի, որոյ ի թիկանց կողմանէ գտանի յիշատակագրութիւն անուան ընծայողի Պռոշ իշխանի, և նորոգողին Դաւիթ վարդապետի. յայս ձև».

«Ի ԹՈՒԻՆ ՉԺԷ.

Այս արփիափայլ նշան անաւուր եւ աստուածային զէն անպարտելի ներկեալ արեամբ որդւոյն Աստուծոյ Աստուածամուխ սուսերս սուրբ մեծ եւ հզօր սպանիչս վիշապին՝ որ զցօղ անապական սուրբ արեանն ենող ի փրկութիւն աշխարհի։ Այս Գեղարդ Աստուածաշուք եւ հիազօր արծան լուսատու կանգնեալ ի փառս Հայաստան աշխարհի, հրափայլ եւ ծաղկանկար արեամբն Քրիստոսի վառեալ եւ վայելչացեալ պատկ պարծանաց կաթուղիկէ եկեղեցւոյ, եւ թագ արքունական ի գլուխ քրիստոնէից. ուստի ի կամս բարձրելոյն օրհնեալ, ես Պռոշ իշխան որդի Վասակայ արժանաւորեալ աստուածեղէն սուրբ Նիզակիս՝ զսա պատուական պահարանաւ, բարեխօս լինձ անաւուր ատենին Քրիստոսի, եւ մեծաւ յուսով ընծայեցի յիմ՝ զանձազն զերեզմանատունս ի սուրբ ուխտս Այրիվանից յիշատակ յաւիտենական լինձ եւ զաւակաց իմոց՝ Պապաքին Ամիրհասանին, եւ Վասակա, եւ կենակցի իմոյ Խուրլու Խաթունին՝ որ կիսօրեայ ելին յաշխարհէ՝ յորոց վերայ ամենեցուն սոցա կենդանեաց եւ մեռելոց ծագէ շնորհ ողորմութեանն Քրիստոսի միշտ եւ հանապազ, եւ փոխանակ այսմ՝ նիզակի շնորհեսցէ Քրիստոս բարեպաշտ իշխանին Պռոշայ խորան արեզակնափայլ, եւ անձառելի եւ լուսափայլ պատկ կազմեալ ի ձեռն Աստուծոյ»։

«Դպիր ի թուին ՌՃԼ եւ Զ-ին՝ ես Դաւիթ վարդապետս առաջնորդ սուրբ ուխտիս Այրի վանից յազգէն Խաղբակա, եւ Պռոշայ որդի Ինանկին եառու նորոգել զպահարան Սուրբ Գեղարդայ առաւել պայծառ քան զառաջինն սակս յուսոյն զոր առ Քրիստոս, յիշատակ լինձ եւ ծնողաց իմոց եւ հօրեղբարց իմոց Դաւիթ եպիսկոպոսին եւ Ստեփաննոս վարդապետին հանգուցելոց ի Քրիստոս, եւ եղբարցն իմոց Բէկումին, Կիրակոսին, եւ քեռն իմոյ Մարիամու, յորոց առնաւարակ կենդանեաց եւ մեռելոց ամենեցուն ողորմեսցի եւ կազմողի սորին Գրիգոր սարկաւագի»։

Գեղարդի տուփի երկփեղկեան դռնակի արտաքին երեսը։ №. 5.

Թադէոս եւ Բարդուղիմէոս սրբազան Առաքեալք, Հայաստանի առաջին Լուսաւորիչներ: №. 6, 7.

Այն երկու պատկերներն, որոնք Մայր Տաճարի աւագ սեղանի խաչկալի երկու կողմի դռներն են, իւղաներկ նկարուած են կտաւի վերայ, և այժմ պահւում են Հայրիկեան Թանգարանում: Շահխաթունեանցի ընդօրինակած խաչկալի արձանագրութեան համեմատ՝ 1720-ական թուականներին Աստուածատուր կաթուղիկոսի հայրապետութեան ժամանակ նկարուած են Զմիւռնիայում և նոյն տեղի ազգայիններից ընծայուած Էջմիածնի:

Սրանց խաչելեալը դեռ պրակիներից դեկն դեզ պէտք գտնուելիս:

Ս. Աբգար անդրանիկ քրիստոնեայ թագաւոր Եդեսիոյ: №. 8.

Այս իւղաներկ նկարը վերի մասում ունի հետեւեալ արձանագրութիւնը.

ԱԲԳԱՐ ՆԱԽԱՀԱՒԱՏ Մ՚Բ Թ՚Գ՚ԻՐ ՀԱՑՈՑ:

Թուական չունի, բայց երևում է, որ նոր ժամանակի գործ չէ:

Ս. Թադէոս Առաքելոյ վանուց Տաճարի արեւմտեան դրան վերի ճակատը: №. 9.

Նոյն Տաճարի Զանգակատունը: №. 10.

Նոյն Տաճարի արեւելեան կողմը հին եկեղեցին եւ կցեալ նոր շէնքի մի մասը: №. 11.

Նոյն Տաճարի նոր կցուած մասի հիւսիսային կողմը: №. 12.

Այն հնագարեան և հռչակաւոր վանքը, որ թէև Վասպուրականի Արտազ գաւառումն է, (այժմ Աւարպատականի Մակու գաւառ) սակայն Քրիստոնէութիւնը առաջին դարուն ի Հայաստան մուտ գտնելուն իրական վկայութիւն տուող պանծալի մի յիշատակն է: Եւ տեսնելով, որ այսպիսի պատմական կարևորագոյն մի սրբավայրի նկարը մինչև այսօր դեռ չէ հրատարակուած, միանգամայն արդէն ունենալով այն վանքի լուսանկարն և օգտուելով բարեպատեհ առիթից, արժան համարեցի ներկայ պրակիս պատշաճ տեղում դասաւորել: Իսկ սորա պատմական տեղեկութեանը ցանկացողք կարող են գտնել ի Վենետիկ 1907-ին հրատարակուած Բնաշխարհիկ Բառարանի Բ. հատորի առաջին երեսում:

Ս. Լուսաւորչի խոր վիրապը մտնելն ու այնտեղից ելելը: №. 13.

Իւղաներկ նկարս Ստեփաննոս և Յովնաթան նկարիչների գործերից է, որոնց մասին ևս յիշած է Շահխաթունեանցը իւր գործին մէջ, Ղուկաս կաթուղիկոսի ժամանակ նկարուած են:

Ս. Միածնի իջումը. Էջմիածնի Տաճարը եւ հրեշտակը, որ ցոյց է տալիս Լուսաւորչին Միածնի իջման տեսիլը: №. 14, 15.

Այս չքնաղ նկարներն, որոնք արծաթի վերայ դուրս քանդակուած են նուրբ արուեստով, սեղանի տարբեր զոգնոցների վերայից առնուած են:

Տրդատ, Աշխէն եւ Խոսրովիդուխտ: №. 16.

Նկարս առնուած է Մայր Տաճարի կրաձեւ որմից փրթած մի բեկորի վերայից, որ այժմ գտնւում է Հայրիկեան Թանգարանում: Կը թուի՝ թէ ի վեր անդ յիշուած Ստեփաննոս և Յովնաթան նկարիչներից առաջ արդէն նկարուած էր:

Վաղարշապատ. նկարուած հիւսիսային կողմից. որ ներկայացնում է հարաւային կողմի ընդհանուր տեսարանը: Պ. Յակոբ Աստուածատրեանի լուսանկարից: №. 17.

Վաղարշապատ. նկարուած հարաւային կողմից, որ ներկայացնում է հիւսիսային կողմի մի մասնաւոր տեսարանը: Պ. Հայկ Դաստեանցի լուսանկարից: №. 18.

Վաղարշապատը Հայաստանի հեթանոսութեան ժամանակ եղած էր մայրաքաղաք Արտաշատից յետոյ, բայց Քրիստոնէութիւնը երբ հաստատութիւն գտաւ հանուր Հայ ազգին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ, ևս առաւել ծաղկեցաւ նա: Եւ մինչդեռ Հայաստանի արքայանիստն էր, ընական էր, որ նաև յետ քրիստոնէութեան՝ այնտեղ պիտի հաստատուէին ամբողջ ազգի Մայր Եկեղեցին և ընդհանրական Հայրապետի Աթոռը: Ուստի աւելի մեծ հռչակ ստացաւ իւր Էջմիածնի տաճարով և եկեղեցական Նուիրապետութեան կեդրոնը լինելով:

Եւ որովհետև ներկայ հնութեանց հաւաքածոյն պատկանում է Էջմիածնի, յոյժ պատշաճ էր հաւաքածոյիս շարքում գտնուելու նաև Վաղարշապատի ընդհանուր տեսարանը, որ իւր պատմական անցեալով և ներկայի կարևորութեամբը նշանաւոր հանդիսացած լինելով հանդերձ՝ բոլոր Հայութեան սիրտը միշտ դէպի իրեն գրաւած է:

Տրդատը մկրտւում է Ս. Գրիգոր Լուսաւորչից: №. 19.

Իւղաներկ նկարս ի վեր անդ յիշուած Ստեփաննոս և Յովնաթան նկարիչների գործերից է:

Տրդատ, Լուսաւորիչ եւ Հռիփսիմէ: №. 20.

Այս ընտիր նկարը հաւաքածոյիս սկիզբը զրուած այն հռչակաւոր ասեղնագործ խաչվառի միւս երեսն է հանդերձ իւր հետևեալ արձանագրութեամբ:

Տրդատ, Մ՚Բ Գրիգոր Լուս. Մ՚Բ Հռիփսիմէ.

Ս. Էջմիածին, Մայր Եկեղեցի հատորէն Հայաստանեայց: №. 21.

Մայր Տաճարի Ս. Իշման սեղանը: №. 22.

Սորա մասին Շահխաթունեանցը գրում է հետեւեալը.

«Զայս յիշատակեալդ կաթուղիկէ ի մէր իշման տեղւոյն հանդերձ սեամբք և ինչ ինչ քարամբք յատակին Աստուածատուր կաթուղիկոս Համատանցի նոր ի նորոյ եւ կառուցանել ի սպիտակ մարմարոնեայ քարանց կարի վայելչաձև»։

Ս. Հռիփսիմէ կոյս: №. 23.

Նոյն Ստեփաննոս և Յովհաթան նկարիչների գործերից։

Վանք Ս. Հռիփսիմէի: №. 24.

Ս. Գայիանէ կոյս: №. 25.

Գործ նոյն նկարիչների։

Վանք Ս. Գայիանէի: №. 26.

Ս. Յակոբ Մծբնայ հայրապետ: №. 27.

Գործ նոյն նկարիչների։

Աչ նոյն Ս. Յակոբ հայրապետի· №. 28.

Սորա մասին Շահխաթունեանցը իւր երկասիրութեան Ա. հատորի 69 երեսում գրում է հետեւեալը։

«Աչ Սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի պարունակեալ յարծաթի շինուածի յարմկանէ ցծայր մատանցն՝ բովանդակն ծաղկաքանդակ, ընդ երկայնութիւն բազկին ունի զերկկարդ գրչութիւն, և ի ծայր անդ արմկանն ըստ այսմ».

«Արդ ես Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցի յաջորդեալ Սրդոյն Լուսաւորչի ի Սուրբ Էջմիածին, տեսեալ զաջ սրբոյն Յակոբայ Մ'ըծբնայ հայրապետին յիշատակ ի դուռն Սաղմոսավանուց, բայց էր կարի խրթին, եւ ի խորտակել զոր առեալ նորոգեցի վայելուչ յօրինուածով եւ եղի յիշատակ եւս ի նոյնում վանս Սաղմոսաց անեղծանելի արձան· ի թվին Հայոց ՌՃԷ ամի»։

Մասն Նոյեան Տապանի հանդերձ իւր տուփով: №. 29.

Սորա նկատմամբ Շահխաթունեանցը իւր գործի Ա. հատորի 65 երեսում գրում է հետեւեալը։

«Տապանակ ծանրակշիռ շէնք արծաթի յորում ամփոփեալ կայ հատուած տապանին Նոյի Նահապետի, և է թզաւ երկայն, քլաւ լայն, և թանձր երկմատնաչափ, մակերեւոյթ նորա կարի փայլուն հարեալ ի գոյն դեղնաշրթի և կարի կարծր, որոյ մի անկիւնն բեկեալ և վերառեալ ընկղաչափ։ Ի միջակէտ տախտակին ամրացեալ կայ փոքրիկ խաչ արծաթի ոսկեզօծ և ունի հասարակ քարինս։ Շէնքն արծաթի պարունակիչ տախտակին ունի երկփեղկեան դրունս, յորոց վերայ են պատկերք Սրբոյն-Յակոբայ հայրապետին՝ տարածեալ ունելով զբազուկսն, և հրեշտակին՝ որ մատուցանէ զտախտակն»։

«Ի թիկանց կուսէ շինուածոյն գոյ յիշատակագրութիւն այսպիսի».

«Կամաւն Աստուծոյ ես մեղսամնած եւ զծուն Դաւիթ անարժան հարեղէս ազգաւ Պոլսեցի տեղապահ վանիցս Սուրբ Գեղարդայ շինել ետու եւ զոյնզգոյն օրինվածօք զարդարեցի զպահարանս Նոյեան տապանիս փոքրկազործ սուրբ տախտակիս՝ որ այժմ կոչի սուրբ Յակոբ։ յիշատակ ինձ եւ իմ ծնողացն եւ ամենայն արեանառու մերձաւորաց, եւ որ շատ եւ որ սակաւ արդիւնք ունիցին այսմ պահարանիս տէրն Քրիստոս հատուցէ ի միւսանգամ զալստեան ամէն։ Եւ որ ոք կամեսցի հանել վանիցս Սուրբ Գեղարդայ, կամ ծախել, կամ զրաւն դնել ազգայնոցս եւ այլոց յանէծս կայենայ եւ դաղանայ եւ խաչահանուացն առցէ, եւ սեւերես առ յիս զոցէ, ամէն։ Շինեցաւ ձեռամբ Քանաքեռցի մեղապարտ ոսկերիչ Աւետին։ Թվ. ՌՃԽԷ. (1698)։

Ս. Գրիգոր Լուսաւորչի ճգնութիւնը Սեպուհ լեռան վերայ: №. 30.

Գործ նոյն վերոյիշեալ նկարիչների։

Ս. Լուսաւորչի մահից յետոյ՝ հովիւներ նոցա ճգնարանից դուրս բերելը: №. 31.

Այս պատկերի ստորին ծայրը կայ հետեւեալ արձանագրութիւնը։ Սրբասնեալ մարմին հովուին հսկողի ի հովուաց բարձեալ ամփոփիլ ատնի։

Սոյն նկարն ես նոյն նկարիչների գործն է։

Ս. Լուսաւորչի աջը: №. 32.

Լուսաւորչի աջի մասին Շահխաթունեանցը իւր գործի Ա. հատորի 68 երեսում գրում է։

Աջ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի պարունակեալ արծաթաշէն կազմուածի յարմկանէ ցծայր մատանցն, ի ծայր արմկանն յարծաթի անդ է պատկեր սուրբ հօրն հայրապետական զգեստուք, և բովանդակ բազուկն ընդ երկայնութիւն յերկուս բաժանեալ է քանդուածովք ոսկերչին, ի մի բաժնին քանդակեալ են երկոտասան չարչարանք սրբոյն, իսկ ի միւս բաժնին զրուագք ծաղկաքանդակք յերկսին միջոցս այսց քանդակաց է յիշատակագրութիւն՝ ըստ այսմ.

«Ցաւուրս Մեծի հայրապետի Ջուղայեցի տեառն Ցակոբի Թիւն Հայոց ըստ տումարի, ՌՃՂ ամի, ի յիշատակ Ստեփաննոս Իլովացի վարդապետի, նոր պահարան Աջոյ ձեռին, սուրբ Գրիգորին Լուսաւորչի, կազմեալ եղեւ Էջմիածնի, առ ի պարծանս Հայկայ զարմի»։

Ի ծայր բազկին ուր միանայ թաթն, գոյ ընդ առաջին շինուածն ամրացեալ ա-պարանջան ի մաքուր ոսկւոյ, յորոյ վերայ երեք վարդաձև շէնք յակինթ ակամբք, և ունի գիր յիշատակի յանուն տուողին՝ ըստ այսմ.

«Ցիշատակ է ապարանջան Թիֆլիզեցի Մարիամ Շաշինի ի յաջ սուրբ Էջմիածին, ի 1770»։

Ս. Արիստակէս հայրապետ: №. 33.

Գործ վերոյիշեալ նկարիչների։

Ս. Սահակ Պարթեւ հայրապետ: №. 34.

Գործ նոյն նկարիչների։

Ս. Մեսրոպ վարդապետ, հեղինակ Հայկական տառերի: №. 35.

Այս պատկերը կտաւի վերայ խւղաներկ նկարուած է Կ. Պոլսեցի նկարիչ Պետրոս Սրապեանից 1895 թուին, որ այժմ գտնուած է Հայրիկեան թանգարանում։

Մովսէս Խորենացի, հայր Հայոց պատմագիրների: №. 36.

Վարագոյր: №. 37.

Սոյն կտաւէ վարագոյրը որ Ս. Իշման սեղանին է պատկանում և մեծ պահոց միջոցին գործ ածւում հարաւային կողմից, իւր վերայ ունի նկարուած զանազան գոյներով ծաղկեայ շրջանակի մէջ հետեւեալները. Ամենից վերը կայ Ս. Երրորդութեան նկարը լուսաւոր ամպերի մէջ. որոնց ներքևից մի հրեշտակ բազկատարած երկու ձեռքով բռնած է մի ժապաւէն, որի վերայ գրուած է հետեւեալը. «Պսակ ծերոց որդիք որդւոց, և պարծանք որդւոց հարք իւրեանց»։ Առակ. 17, 6։ Սրանից ներքև նկարուած է Ս. Լուսաւորիչ, որի առաջ կայ հետեւեալ գրուածը. «Ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Աստծ։ Եսայ։ 8։ Այս գրուածի երկու կողմերում կան Լուսաւորչի չարչարանաց գործիքները և վիրապի բերանը։ Իսկ Լուսաւորչի երկու կողմից շրջապատած են իրեն առհմից եղած բոլոր յաջորդ հայրապետները, և զանազան ժամանակ եղող մի քանի հայրապետներ և այլ երեւելի անձինք, որոնց անունները թուանշաններով մի առ մի վարագուրի ներքևը նշանակուած են։

1։ Ս՞ը Գրիգոր Լուսա՞ւ եւ առաջին հ՞ոյրպետ Հայոց։ 2։ Ս՞ը Արիստակէս։ 3։ Ս՞ը Վրթանէս։ 4։ Ս՞ը Գրիգորիս։ Աղ՞ կ՞ամ։ 5։ Ս՞ը Յուսիկ։ 6։ Ս՞ը մեծն Ներսէս։ 7։ Ս՞ը Իսահակ Պարթեւ։ 8։ Քաջն Վարդան։ 9։ Դուստրը ն՞ը. Շուշան։ Եղբարք նոցա։ 10։ Հմայեակ։ 11։ Եւ Համազասպեան։ 12։ Ս՞ը իշխանն Վասակ։ 13։ Գրիգոր իշ՞ Մամիկոնեան։ 14։ Գրիգոր ե՞ղբ վկայասէր։ 15։ Գրիգոր ե՞ղբ Պահլաւունի։ 16։ Ս՞ը Ներսէս Շնորհալի։ 17։ Գրիգոր չ՞որրդ տղայ։ 18։ Գրիգոր հին՞գերդ։ 19։ Գրիգոր Զ-րդ քարավէժ։ Օրհնե՞լ է Ա՞ծ։

Իսկ վարագուրի ամենից ստորին ծայրը կայ ընծայողի հետեւեալ յիշատակագրութիւնը։

«Ցի՞շատակ է ի Քրիստոս հանգուցեալ։ Ցկ՞ի դուստր եւ աղայ Խաչիկի կողակից Սառայ խաթունին ի դուռն Ս՞ը Էջմիածնի ամ՞ոյն ի հայրապետութեան տ՞ն Ղուկաս Ս՞ը՞ն կ՞թուղկսին հոգաբարձութ՞ը ն՞ւիրկ Եփրեմ մ՞րդպետին յամի՞ տն 1790 ի տիրապահ քաղաքն Մաղրաս որ ի հնդիկս։ Օրհնեալ է Ա՞ծ։

Ս. Օհան Օձնեցի հայրապետ: №. 38.

Վերոյիշեալ նկարիչների գործերից։

Ս. Գրիգոր Նարեկացի: №. 39.

Գործ նոյն նկարիչների։

Ս. Ներսէս Շնորհալի հայրապետ: №. 40.

Գործ յիշեալ նկարիչների։

Հայրապետական աթոռ հին ձեւի: №. 41.

Այս աթոռը փայտաշէն է և տեղ տեղ ոսկրազարդ, և շատ հաւանական նշաններով հաստատւում է որ մինչև 250 տարուայ հնութիւն կ՞լինի, և պատրաստուած է Նոր Ջուղայում։

Հայրապետական զոգ: №. 42.

Սոյն զոգը գոյնզգոյն ասուեղէն կտորներից ծաղկաձև կարուած է, և միջավայրում կայ հետեւեալ յիշատակագրութիւնը։

«Ցի՞շտկէ Ըստամպօլցի մա՞հսի Երամին եւ ղստերն հաճի Եվդոկիային ե ս՞ը Էջմիածին ձեռամն Սիմէոն վրդ՞պ ՌՄԹ»։

Եպիսկոպոսական ձեռնադրութեան արծուեզոգ: №. 43.

Այս զոգը ընտիր թաւշի վերայ նուրբ և չքնաղ ասեղնագործութիւն է գոյնզգոյն մետաքսի թելերով, որ Հնդկաստանումն է գործուած։ Արծուին երկու կողմերը կան Յ. վ. ղ. յ. տառերը։

Վարագոյր: №. 44.

Այս կաւէ վարագոյրի վերայ, որ Մայր Տաճարի Ս. Իշման սեղանին պատկանելով՝ մեծ պահոց միջոցին գործ է ածւում հիւսիսային կողմից, տպածոյ նկարուած է զանազան գոյներով ծաղկեայ շրջանակի մէջ եպիսկոպոսական ձեռնադրութեան հանդէսը։ Ներքևում ունի հետևեալ յիշատակագրութիւնը.

«Ցիշատակ Մկրտչի որդի ալ՝ն Օհանին, ի դուռն ս՝ը Էջմիածնի ձեռամն Ն՝երկ Եփրեմ վրդ՝»։ 1790 ի Մաղրաս»։

Կոնքեռ: №. 45.

Սա՝ կարմրագոյն ընտիր թաւիշի վերայ ոսկեթելով ծաղկենկար նուրբ ասեղնագործութիւն է. միջավայրում կայ Քրկէի պատկերը և չորս կողմերում գտնուն են չորս աւետարանիչները։ Կ. Պոլսում գործուած է վերջի ժամանակներում։

Բազպան: №. 46.

Սոյն բազպանը մետաքսեայ կերպասի վերայ ասեղնագործութիւն է, ընտիր մարգարիտներով բոլորովին զարդարուած։ Հաւանօրէն 150 տարուայ հնութիւն կ՝լինի։

Վակաս, Խոյր, Արտախուրակ: №. 47.
Փորուրար: №. 48.

Այս փորուրարը, վակասը և խոյրը իւր արտախուրակներով ընտիր թաւիշի վերայ չքնաղ ասեղնագործութիւն են, ոսկու և երփներանգ մետաքսէ թելերով։

Փորուրարին վերայ կայ Իսահակի զոհման պատկերը և նորա վերև կողմակի գտնուում է Ս. Քրկէի պատկերը խաչն ուսին բարձած։

Վակասի միջավայրում կայ Ս. Երրորդութեան պատկերը, իսկ երկու կողմերում գտնուում են չորս աւետարանիչները։

Խոյրի մի կողմը ունի Քրիստոսի Յարութեան, հրեշտակների և իշխաբեր կանանց նկարներն. իսկ միւս կողմը Քրկէի խաչելութեան նկարը։

Զախակողմեան արտախուրակի վերի ծայրում նկարուած է Հօր Աստուծոյ պատկերը և ներքևի մասում՝ Աւետաբեր հրեշտակը, որի ներքևում կայ գրուած «Վրթանէս»։ Իսկ աջ կողմի արտախուրակի վերի ծայրում նկարուած է Ս. Հոգոյն իջումը և ներքևի մասում՝ Ս. կոյսն Մարիամ, որի ներքևում գրուած է «Վարդապետ»։

Փորուրարի և վակասի վերայ մի և նոյն հետևեալ յիշատակագրութիւնը գտնուում է։

«Ցիշատակ է Աղա Սահակին Մուրատեն ի վայելումն Վրթանէս վարդապետին Աշտարակեցւոյ, նկարեցաւ ի Զին 1250 թուին Հայոց»։

Ս. Էջմիածնի Հնդկաստանից բերուած ասեղնագործ շուրջառը: №. 49.

Այս շուրջառը նոյնպէս վերոյնշանակեալ փորուրարի, վակասի, և խոյրի հետ միասին պատրաստուած է Զինաստանում, և նոյն ազա Սահակ Մուրատեանից նուիրուած է յիշեալ Վրթանէս վարդապետին։

Սա՝ կարմրագոյն, ընտիր կերպասի վերայ գոյնզգոյն մետաքսի և ոսկու թելերով ճարտարարուեստ, չքնաղ և ամենանուրբ ասեղնագործութիւն է։

Միջավայրում նկարուած է Ս. Էջմիածնի տաճարը, որի առաջ կայ երկդռնի պարսպով մի գաւիթ։ Հիւսիսային դրան միջում կանգնած է ցուպ ի ձեռին փիլոնով և վեղարով մի եկեղեցական, որի քիչ առաջով Աւետեաց երկրի լրտեսները խաղողի ողկոյզը ձողով իրենց ուսերի վերայ բարձած բերում են։ Իսկ հարաւային դրան միջում կայ Հօր Աստուծոյ պատկերը, որի ներքև գրուած է մի սանդուղ. սորա վերայից հրեշտակներն ել և էջ են անում, սանդուղի ստորին կողմը Յակոբ նահապետ ընկողմանած տեսիլ է տեսնում։ Երկու դռների միջոցը կայ Արարատ լեռը և սորա գագաթում Նոյի տապանը, իսկ լեռան լանջի վերայ գտնուում է հաւալուս թռչունը։ Արարատի աջ կողմը մի հրեշտակ Լուսաւորչին ցոյց է տալիս Էջմիածնի տաճարը և նա ծնրադրած և բազկատարած նայում է դէպի վեր։ Իսկ ձախ կողմը Տրդատ, Աշխէն և Խոսրովիդուխտ ծնրադրած և ձեռնամած նոյնպէս դէպի վեր տաճարին են նայում։ Սանդուղի ձախ կողմը նկարուած են Գալիլիայի ծովը ալէկոծեալ վիճակում և մի նաւ, որի մէջ նստած է Յիսուս իւր աշակերտներով։ Գաւթի հիւսիսային դրան կից կրկին նկարուած է նոյն ծովը, որի վերայ Յիսուս կանգնած՝ իւր աշակերտի—Պետրոսի ձեռքից է բռնում ընկղմելուց ազատելու համար. իսկ ծովի մի կողմը երևում է մի նաւ, նորա միջից Յիսուսի միւս աշակերտները նայում են իրան և Պետրոսին։ Շուրջառի երկու ծայրերում նկարուած են Հռիփսիմէ և Գայիանէ կոյսերը իրենց տաճարներով։ Էջմիածնի տաճարի զանգակատան վերի մասի ճակատում նկարուած կայ Աստուածածնի պատկերը՝ Յիսուս մանուկը իւր գրկում։ Տաճարի հիւսիսային և հարաւային կողմերում չորս աւետարանիչները կան և նրանց կողմնակի դիրքում գտնուում են Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները։ Ամբողջ տաճարը լուսոյ ճառագայթներով պատած է և ճառագայթների մէջ բազմաթիւ հրեշտակներ են գտնուում։ Ճառագայթների մէջ վերի ծայրում նկարուած [illegible] և լուսին։

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԱՆՎԱՆ

Եմիփորոն: №. 50, 51.

Վերոյիշեալ Վրթանէս վարդապետը, որ շուրջառը ընծայ ընդունելուց մի քանի տարի յետոյ եպիսկոպոս կը ձեռնադրուի Ս. Էջմիածնում, այս առթիւ ևս նուէր կընդունի սոյն եմիփորոնը, որ նոյնպէս պատրաստուած է Զինաստանում։

Սա ևս սպիտակ, ազնիւ կերպասի վերայ երփներանգ մետաքսի և ոսկեայ թելերով ճարտարարուեստ ասեղնագործութիւն է։

Սորա թիկունքի կողմը՝ ամենից վերևը նկարուած է Ս. Երրորդութեան պատկերը՝ իբրև երկնային բարձրութեան մէջ շրջապատուած լուսաւոր ամպերով, որի ներքևից կան մի աշխարհագունտ և Եզեկիէլի տեսլեան չորեքկերպեան կենդանիներն ու անիւը, այս վերջինի կեդրոնում գրտնուում է մի գառի նկար՝ ուսին վերայ դրօշակ բարձած։ Ամբողջ կենդանիները ա-

նիւը և աշխարհագունեալը իբրև մի աթոռ ձեւացած՝ Ս. Երրորդութիւնը նորա վերայ բազմած է երևում։ Այս տեսլեան պատկերից դէպի վայր՝ թիկնամիջից սկսած մինչև ստորի մասում նկարուած են, նախ մի հրեշտակ ամպերի միջից եկած, յետոյ սորա ներքև հայր Աբրահամ թուրը բարձրացրած կանգնած է՝ Աստուծոյ զոհելու իւր Իսահակ որդուն, որ զոհի փայտ դիզուած սեղանի վերայ ծնրադրած, գլուխը խոնարհած և ձեռները կապուած դրութեան մէջ է, և եկող հրեշտակը նաև վերևից թուրը բռնած արգելում է Աբրահամին, որի ներքև կայ նաև Սաբեկայ ծառը և նորա ստորոտում՝ մի խոյ, և խոյի հանդիպակաց կողմը՝ մի անօթով բոցաւոր կրակը, և վերջիններիս ներքևում կայ հետևեալ արձանագրութիւնը.

«Զու՞ղյցի Ցարուի՞ն Մելքոնե՞ն ընծ՞յեցի վ՞ս հոգւոյ կ՞ենկից խ թնին ի Ք՞ս հնգցելոյ»։

Իսկ Եմիփորոնի առաջի կողմը՝ ամենից վերև լանջի վերայ նկարուած է Հօր Աստուծոյ պատկերը ամպերի մէջ, որի մի կողմը կայ աւետաբեր հրեշտակը շուշան ի ձեռին և միւս կողմը՝ Ս. կոյս Մարիամ, որի գլխի վերայ Ս. Հոգին աղաւնակերպ իջնելու ձեւով երևում է։ Հօր Աստուծոյ պատկերի ներքևից սկսած մինչև ի վայր կախուած մասում գտնւում է մի սանդուղ, սորա վերայից հրեշտակներն ելևէջ են անում, և սանդուղի ստորոտում՝ Յակոբ նահապետ ընկողմանած այս խորհրդաւոր տեսիլն է տեսնում։ Նահապետի մի կողքում կան իւր հացի պարկը, ջրի ամանը և ձեռքի ցուպը։ Սանդուղի ետևի ստորոտից մինչև գլուխը գտնւում է մի որթատունկ խաղողի ողկոյզներով։ Որթատունկի ետևի կողմը իբրև հեռուից երևում է մի քաղաքի տեսարան, որ թերևս լինի Միջագետաց Խառանը, ուր գնալու էր Յակոբ նահապետը։ Նաև Եմիփորոնի թէ թիկանց և թէ առաջի կողմը ամբողջապէս ծաղկենկար շրջանակով շրջապատուած են։ Լանջի ներքև ծածկուած մի փոքր մասում ևս կայ հետևեալ արձանագրութիւնը։

«Ի վ՞յելս ս՞ղ Էջմի՞ծնի. Հնդկաց նուիրակ Վրթանէս Արքեպիսկոպոսին Աշտարակեցւոյ. եւ որդւոյն իւրոյ Թովմաս վարդապետին Ազուլեցւոյ, նկարեցաւ ի Զին յամի տ՞ն 1817. հոգաբարձու՞ն յարգոյ պ՞ն Յովսէփ Ցարուի՞ն»։

Ս. Էջմիածնի Մայր տաճարի հայրապետական արոտը։ №. 52.

Սորա մասին Շահխաթունեանցը իւր գործի Ա. հատորի 43 երեսում գրում է հետևեալը.

Կաթուղիկոսարանն նոյնպէս զետեղեալ անշարժ առ սեանն արևելեան հիւսիսոյ դասագլուխ առաջին դասու արևելեանն բաժնի. վերին շինուածքն՝ որ է տանիքն, է բոլորովիմբ փայտեայ վայելուչ իմն դրուագեալ հրաշակերտ. ունի ի միջին տեղւոջ գմբէթ կիսաբոլորակ, և ի չորեսին անկիւնսն զչորս փոքրիկ կաթուղիկէս, և ի շրջանական չորից կողմանց փոքր պատկերք փորածոյք, այս վերին շէնք է բոլորովին ոսկեզօծ։

Յատորև քան զշրջանական յիշատակեալ վերին բաժնի՝ ի չորից կողմանց յինն բաժինս, որ է յիշատակագրութիւն նուիրողացն արդեամբք իւրեանց դայս կաթուղիկոսարան՝ ըստ այսմ.

«Շինեցաւ պատրիարքարանս ի յիշատակ Ակնցի մահտեսի Մինասի որդի Սեղբոսին եւ Կամրկապցի Նազարի որդւոց մահտեսի Առաքելին, Մարտիրոսին եւ Ցարութիւնին եւ ամենայն զարմից նոցին, թուին ՌՃՀ. ի հայրապետութեան տեառն Աստուածատրոյ սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց եւ հոգաբարձութեամբ տ՞ր Յովհաննէս եւ տէր Պետրոս վարդապետաց»։

Իսկ սիւնքն և ներքին շինուածքն յարմար վայելչութեամբք պատեալ ի մանրահատ ծաղկաձև և անկիւնաւոր սատափէ և ի խղոյ (պաղայ)։

Ի վերին եղերս այսր ներքին շինուածոյ ի վեցեքին բաժինսն է նոյն յիշատակագրութիւն. և տառքն գեղեցկապէս և յարմար ձեւացութեամբ ի սատափէ յանուն նոյն վերոյիշեալ արանցն՝ ըստ այսմ։

«Ի Հայրապետութեան տէր Աստուածատուր Սրբազանի սուրբ Էջմիածնի եւ հոգաբարձութեամբք Բաղիշեցի Յովհաննէս եւ Աստապատցի Պետրոս վարդապետացն (Այս յարեւմտից կուսէ, իսկ ի հարաւոյ՝) յիշատակ է Ակնցի մահտեսի Մինասի որդի մահտեսի Սեղբեստրոսին, եւ Կամրկապցի Ազարի որդւոցն՝ մահտեսի Առաքելին, Մարտիրոսին, Ցարութիւնին, եւ ծնողաց, եւ ամենայն ազգաց եւ զաւակացն, ՌՃՀ. թվին»։



Ս. Էջմիածնի հնագոյն նշանաւոր խաչվառը: №. 1.

Древнѣйшая и знаменитая хоругвь Св. Эчміадзина.



Մասն կենաց փայտի հանդերձ Տապանակով: № 2.

Часть животворнаго креста въ Кіотѣ.

Տապանակի արտաքին երեսը. № 3.

Внѣшній видъ Кіота.



Գեղարդ Ղունկիանոսի հարիւրապետին. № 4.

Копье, коимъ прабоденъ Іисусъ Христосъ.



Գեղարդի տուփի արտաքին երեսը: № 5.

Внѣшній видъ кіота съ копьемъ.

Ս. Թադէոս եւ Բարդուղիմէոս Առաքեալք: №. 6, 7.

Св. св. Апостолы Ѳаддей и Варѳоломей.

Ս. Աբգար թագաւոր: №. 8.

Св. Авгаръ, царь армянскій.



Ս. Թադէոս Առաքելոյ վանքի վերին նակատը: № 9.

Верхняя часть фасада монастыря во имя св. апостола Ѳаддея.

Նոյն վանքի Զանգակատունը: № 10.

Колокольня того же монастыря.

Նոյն վանքի արեւելեան կողմը: № 11.

Восточный фасадъ того же монастыря.



Նոյն վանքի հիւսիսային կողմը. № 12.

Сѣверный фасадъ того же монастыря.

Ս. Լուսաւորչի մուտն եւ ելն ի վիրապէն. № 13.

Вверженіе и выходъ изъ рва св. Григорія просвѣтителя Арменіи.

Ս. Միածնի իջումն եւ Տաճարն. № 14, 15.

Сошествіе Единороднаго и Первопрестольный Храмъ.

Տրդատ, Աշխէն եւ Խոսրովիդուխտ. № 16.

Трдатъ, Ашхенъ и Хосровидухтъ.



Վաղարշապատի հարաւային կողմը. № 17.

Южная часть Вагаршапата.

Վաղարշապատի հիւսիսային կողմը. № 18.

Сѣверная часть Вагаршапата.

Դրդատի մկրտութիւնը. № 19.

Крещеніе Трдата.

(Խաչվառ). Տրդատ, Լուսաւորիչ եւ Հռիփսիմէ. № 20.

(Хоругвь) Трдатъ, Григорій Просвѣтитель и Рипсимэ.



Ս. Իշման տեղը· № 22.

Мѣсто сошествія Единороднаго.



Վանք Ս. Հռիփսիմէի. № 24.
Монастырь Св. Рипсиміи.

Ս. Հռիփսիմէ № 23.
Св. Рипсимэ.



Ս. Մեսրոպ. № 35.
Св. Месропъ.

Ս. Սահակ Պարթև. № 34.
Св. Саакъ.



Մոն. Սբ. Գայէ.

Վանք Ս. Գայիանէի. № 26.



Ս. Յակոբ. № 27. Св. Яковъ Нисбійскій.

Աջ Ս. Յակոբայ. № 28.

Десница Св. Іакова Нисбійскаго.



Տապանակ Նոյեան Տապանի. № 29.

Частица Ноева ковчега.

Ս. Լուսաւորչի աջը. № 32.
Десница Св. Григорія Просвѣтителя.

Ս. Արիստակէս հայրապետ. № 33.
Пр. Пр. От. Св. Аристакесъ.



Ս. Գայիանէ. № 25.
Св. Гаянэ.

Վարագոյր. № 37.

Занавѣсъ.

Ս. Մովսէս Խորենացի. № 36.
Св. Моисей Хоренскій.

Ս. Լուսաւորչի գաղարիք. № 30.

Ս. Լուսաւորչի ամբ. № 31.

Ս. Ներսէս Շնորհալի. № 40.
Св. Нерсесъ Благодатный.

Ս. Գրիգոր Նարեկացի. № 39.
Св. Григорій изъ Нарека.

Ս. Օհան Օձնեցի. № 38.
Св. Іоаннъ изъ Оцуна.

Հայրապետական գոգ. № 42. Покровъ Патріаршій.



Հայրապետական աթոռ. № 41.
Патріаршій Тронъ.

Եպիսկոպոսական արծուեզորգ. № 43.

Орлецъ архіерейскій.

Վարագոյր. № 44.

Занавѣсь.



Կոնքեռ. № 45.

Набедренникъ.

Բազկաճ. № 46.

Наручи священническіе.

Վակաս, Խոյր, Սրտախուրակ. № 47.

Нарамникъ, Тіара съ Подвѣсками.

Фотогр. № 48.
Епитрахиль.



Հնդկաստանէն բերուած շուրջառ. № 49.
Риза привезенная изъ Индіи.

Հ. Ս. Հ. ԳՐԱԴԱՐԱՆ
Р. А. Библиотека
7/XI—1922
Մասնաճիւղ ԱՆԱՊԱՏ



Եմիփորոն. № 50, 51.

Омофоръ.

Մայր Տաճարի հայրապետական Աթոռը. № 52.

Патріаршій тронъ въ Первопрестольномъ храмѣ.



2001 --
2013